ԱՆԹԻԼԻԱՍԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Վ. Ա. Զ Գ Ե Ն Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս

ԷՋՄԻԱԾԻՆ

Վեհափառ Զարեհ Կաթողիկոսի օծումը պիտի կատարվի սեպտեմբեր 2-ին Անթիլիասի Մայր Տաճարին մեջ:

Տեղապահ՝
ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

27 օգոստոս 1956
Թեհրան

ԽՈՐԵՆ, ԶԱՐԵՀ ԵՎ ՂԵՎՈՆԴ ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒՆ

ԱՆԹԻԼԻԱՍ

Մեր միակ ցանկությունն է, որ Տանն Կիլիկիո Կաթողիկոսի օծումը կատարվի կանոնական և համազգային համերաշխության պայմաններու մեջ: Եթե այդ երկու պայմանները չստեղծվին, կհորդորենք զՁեզ հետաձգել սեպտեմբեր 2-ի արարողությունը, որ կրնա անդարմանելի բարդություն և վերջնական հերձված առաջացնել, Ձեզ տանելով եկեղեցիին ու Ազգին եզովիին տակ:

Փորձենք անգամ մը ևս միացյալ ճիգերով ստեղծել բղձալի պայմանները ի սեր մեր սուրբ հավատքի ու Ազգի միության:

Մենք ոչ մեկ անհաղթահարելի արգելք չենք տեսներ:

Ձեր կողմն դրական պատասխանի մը պարագային Ձեզ ներկայացնելիք նոր առաջարկներ ունինք ի շահ Ձեզ և Ձեր Արոռին:

Շինարար սուրբ գործի համար բնավ պետք չէ հուսահատիլ կամ խռովիլ: Պատասխանատու ենք Աստուծո և մեր պատմության առաջ:

Վ. Ա. Զ Գ Ե Ն Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

30 օգոստոս 1956
Էջմիածին

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Վ. Ա. ԶԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ստացանք ընտրյալ Կաթողիկոս Զարեհ Ա.-ի և մեր անունով Ձերդ Վեհափառության 30 օգոստոսի հեռագիրը: Սրտագին բաղձացող ենք երկու Աթոռների համերաշխության ի շահ եկեղեցիի և Ազգի: Մեր այդ բաղձանքին պատճառավ էր, որ հետաձգեցինք օծումը մինչև այսօր, որով մեր խիղճը հանդարտ է Աստուծո և եկեղեցիին և Ազգին առջև: Ներկայիս նոր հետաձգում բազմաթիվ պատճառներով անկարելի է այլևս:

Կխնդրենք արտոնել Ձեր եպիսկոպոսներուն մասնակցիլ սեպտեմբեր 2-ի օծման իբր դրական փաստ սիրալիր հարաբերության և քրիստոնեական ոգվույն: Օծումեն վերջ Կիլիկյան Աթոռը տրամադիր է, ինչպես միշտ, բարյացակամորեն քննելու որևէ նոր առաջարկ:

Եղբայրական սիրով և հարգանքով,

Տեղապահ՝
ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Կեդրոնական Կրոնական ժողովի ատենապետ՝
ՂԵՎՈՆԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ

31 օգոստոս 1956
Բեյրութ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Վ. Ա. ԶԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԷՋՄԻԱԾԻՆ

Սրտի ցավով կեղաղորդենք Ձերդ Ս. Օծության, որ այսօր, սեպտեմբեր 2-ին, տեղի ունեցավ Զարեհ Եպիսկոպոսի օծումը Անթիլիասի մեջ, մասնակցությամբ Խորեն և Ղևոնդ Եպիսկոպոսներու և ասորի հակոբիկյան Եպիսկոպոսի մը: Աթոռիս միաբանության մեծամասնությունը, հաստատ մնալով Կաթիրեի ժողովի որոշումներուն, բերի և անընդունելի նկատելով փետրվար 20-ի ընտրությունը, չմասնակցեցավ արարողության: Կանոններու և ավանդությանց խախտումը կնանձնենք նվիրապետական Աթոռներու ուշադրության, սպասելով օրինավոր կարգադրության՝ ի պաշտպանություն եկեղեցվո օրենքներուն:

Տեղապահ Տաճն Կիլիկիո՝
ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆ

2 սեպտեմբեր 1956
Բեյրութ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Անթիլիասի սեպտեմբեր 2-ի արարքը, իբրև ոտնակոխում եկեղեցական օրինաց և ըմբոստացում եկեղեցվո բարձրագույն հեղինակության դեմ, ըստ մեզ բարոյական մահվան դատավճիռն է օծվողին և օծողներուն, մեծ ցավ պատճառելով բոլորիս:

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ

6 սեպտեմբեր 1956
Սամբուլ

ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. Խ Ա Դ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ԲԻՔՖԱՅԱ

Սարսուռով կարդացինք Ձեր հեռագիրը Անթիլիասի Տաճարին մեջ Զարեհ եպիսկոպոսի վրա կատարված արարողության մասին սեպտեմբեր 2-ին: Ողբանք կացությունը, որ ստեղծված է Ձեր Աթոռեն ներս և լիովին կբաժնենք Ձեր և Ձեր միաբանության վիշտն ու հոգեկան խռովքը:

Մենք ամեն բան փորձեցինք վեց ամիսե ի վեր, բոլորին ներշնչելու համար մեր սուրբ հավատքի ու Ազգի միության և անբաժանելիության ոգին:

Այժմ ցավով կհաստատենք, թե փետրվար 20-ի թերի և անընդունելի ընտրությունեն հետո սեպտեմբեր 2-ին Զարեհ եպիսկոպոսի վրա կատարվեր է արարողություն մը, որ կարելի չէ ձեռնադրություն և օծում համարել, վասնզի կատարվածը հակառակ է մեր եկեղեցական սուրբ կանոններուն և ավանդությանց և բոլորովին խորթ Հայաստանյայց Եկեղեցվո ազգային նկարագրին և ոգվույն:

Հայ Եկեղեցին ու հայ ժողովուրդը երբեք պիտի չհանդուրժեն, որ հայ հոգևորական մը իր իշխանությունը ստանա ոչ հայ հոգևորականներու ձեռնադրությամբ, այլապես մահացու ըլլալու աստիճան վտանգավոր նախընթաց մը ստեղծված պիտի ըլլա մեր Եկեղեցվո ապագային համար: Մենք վստահ ենք, թե պիտի չգտնվի Հայ Եկեղեցվո ճշմարիտ սպասավոր մը, պիտի չգտնվի հայ հավատացյալ մը, որ հաշտվի սեպտեմբեր 2-ին գործված արարքին հետ: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը սեպտեմբեր 2-ի արարողությունը կնկատե Ձեր Աթոռի մեջ տեղի ունեցած անդարմանելի հակաօրինականություն մը, որով Խորեն, Զարեհ և Ղևոնդ եպիսկոպոսները դրժած են իրենց հանձնված սուրբ ավանդները անվթար պահելու և պահպանելու ուխտը:

Ձեզ և Ձեր հավատարիմ օրինապահ միաբաններուն կմաղթենք իմաստություն, համբերություն, ուժ և եռանդ, որպեսզի Աստուծո օգնությամբ կարողանաք վերահաստատել Ձեր Աթոռեն ներս օրինավոր իշխանություն, հոգևոր հեղինակություն և խաղաղություն, առաջնորդված Հայ Եկեղեցվո միության փրկարար ու շինարար ոգիեն:

«ՈՂՋ ԼԵՐՈՒՔ, ԶՕՐԱՑԵԱԼ Ի ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ»:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

8 սեպտեմբեր 1956
Էջմիածին